# Հայոց լեզուն ի՞նչ է ասում «առաջնորդութիւն» գաղափարի մասին՝ ստուգաբանական ակնարկ

Թովմաս Սամուէլեան, 23 մայիս 2009թ.

Understanding Leadership –
An Etymological Approach:
What the Armenian language tells us about the Armenian concept of 'leadership'

Tom Samuelian, May 23, 2009

# Փոխկապակցուած Բառեր

- առաջնորդ –  առ + աջ + նորդ
- աջակցել – աջ + ա + կից
- յաջող – ի + աջ + ող   (համեմատել ձախ-ող) *
- յառաջ – ի + առ + աջ
- առաջին – առ + աջ + ին
- առջեւ – առ + աջ + եւ

√ աջ

*Գրուած է դասական ուղղագրութեամբ, որպեսզի բառերի կառուցուածքը պարզ երեւայ՝ օր.  յ/ի- նախդիրը:   յաջող բառը կապ չունի հաջել բառի հետ:

# Անգլերէն – Leadership – համեմատութիւն

- առաջնորդ – leader
- աջակցել – assist
- յաջող – succeed
- յառաջ – forward
- առաջին – first
- առջեւ – front

√ աջ – right   երկիմաստ 'աջ ձեռք' եւ 'ճիշտ' (հականիշներ – *ձախ*  եւ *սխալ*)

# Իմաստային Դաշտ

- Հայերէն «առաջնորդ» բառը գտնւում է մի այլ իմաստային դաշտում կամ համատեքստում քան 'leadership'
- Մեր նախնիները իրենց հաւաքական իմաստութեամբ ձեւաւորեցին մեր լեզուն. կապեցին այս բառը մի շարք գաղափարներների հետ, որոնք, օր. անգլերէնում, իրար հետ կապուած չեն

# Հայեցի Աշխարհահայեացք

- Տալիս է հայերէն «առաջնորդ» բառին այլ երանգներ քան այլ լեզուներում:
- Մեր ազգին յարմարացուած բառ է:
- Անանուն հազարաւոր հայեր սերնդէ սերունդ այս բառերի ստեղծմամբ, օգտագործմամբ, եւ փոխանցմամբ գտել են այս գաղափարների հայեցի արտայայտումը:

# Ինչո՞ւ են կապել այս գաղափարները իրար հետ:

- Ստուգաբանությունը կարող է օգնի յայտնաբերել այդ կապերը:
- Հայերէնը հնդեւրոպական լեզու է:
- Յունարէն, Սանսկրիտ, Աւեստերէն (նաեւ անգլերէն, ռուսերէն, լատիներէն) նոյն լեզուաընտանիքից են:
- Երբեմն հնարաւոր է գտնել լեզուի կապերը անցեալում:

# √ աչ

- հնդեվրոպական արմատ *sidh
- յունարէն – εὐθύς euthus, εἶθαρ eithar 'immediately, make straight'  'ուղղակի'
- սանսկրիտ –  sādháyati 'strive', 'find' 'ձգտել, գնտել, նպատակասլաց'
  - Siddhartha – the one who found meaning of life ով կեանքի իմաստը գտաւ (Բուդդհա 'արթուն', 'աչքերը բաց', ուղուց չշեղուող)
- աւեստերէն –  ās-na 'virtuous'  'առաքինի, արդար, ուղիղ'

# Լեզուամտածելակերպ

- Հայերը հայերէն լեզւով կապել են
  - √ աջ – ուղղել, ուղղակի, հրատապ
  - √ աջ – ձգտել, նպատակասլաց
  - √ աջ – ճիշտ, արդար, առաջինի
  - √ աջ – գտնել, ըմբռնել

# Առաջնորդութիւն որպէս ճանապարհ դէպի ապագան

- Աշխարհը անկատար եւ ծուռ է, այսինքն՝ ուղղման, բարեփոփոխման կարիք ունի:
- Ուղղման կարիքը հրատապ է, անմիջական:
- Առաջնորդութիւնը ժամանակի հարթութեամբ ճանապարհորդութիւն է յառաջ, դէպի ապագայ:
- Ապագան անտեսանելի եւ անչոշափելի է՝ տեսանելի միայն մտքի աչքերով:
- Առաջնորդը օգնում է գտնել ճանապարհ, լուսաբանելով ապագան բառերով եւ մտքերով, որպէսզի ինքն ու ուղեկիցներ ապահով տեղ հասնեն:
- Առաջնորդութիւնը աշխարհը ուղղելու գործողութիւն է:

# Բարեփոխման Նախադրեալները

հրատապություն

ըմբռնում

Առաջնորդություն

առաքինություն, ուղղություն

ձգտողություն